

**Հենրիկ Բախչինեանի  
մատենախօսութիւնը  
«Հոգու եւ ինքնութեան հետքերով»  
Նորատիպի շնորհահանդէսին**

Առհասարակ չափազանց դժուար է խօսել երկու խմբերի պատկանող մարդկանց մասին: Առաջինները նրանք են, որոնց շնորհներն ու վաստակը շատ նուազ են եւ խօսելիս ստիպուած եւ լինում անհարկի վերագրումներ ու չափազանցուած գնահատականներ կատարել: Նման մարդկանց մասին, թէկուզ յաւուր պատշաճի խօսելը վիրաւորական է բուն իսկ խօսողի համար եւ ասելի նախընտրելի է լռել: Միւս խմբին պատկանող մարդիկ, որ սովորաբար շատ ասելի քիչ են, ունեն այնպիսի մեծ շնորհներ եւ խոշոր վաստակ, որ միշտ վախենում եւ, թէ քո խօսքը նրանց մասին միշտ թերի կը լինի, եւ քո թէկուզ եւ զուսպ դրուատանքները կարող են վիրաւորել նրանց համեստութիւնը, քանզի այդ մարդիկ, որպէս օրէնք, չափազանց համեստ են լինում: Այդ խմբի մարդկանց թուին է պատկանում Հայր Լեւոն Զեքիեանը:

Դեռեւս իր 60-ամեակը չբոլորած այս հայորդին հասցրել է արդէն ծաւալել 45-ամեայ գործունէութիւնը, որ ընդգրկում է եկեղեցական, գիտական, մանկավարժական, հասարակական, մշակութային ոլորտները՝ թէ՛ ազգային եւ թէ՛ համազգային յարաբերակցութիւններով: Հայր Լեւոնի գործունէութեան այս ոլորտներից իւրաքանչիւրն արդէն առանձնակի ներկայացման եւ գնահատման կարօտ է, եւ ես չեմ յաւակնում եւ ոչ էլ հնարաւոր է այդ բանը կատարել մէկ ելոյթի ընթացքում: Մանաւանդ որ այսօր առիթը Հայր Լեւոնի հեղինակութեամբ լոյս տեսած երկու գրքերն են, մէկը տպագրուած Պէյրութում, միւսը՝ Երեւանում: Ես ինձ համար մեծ պատիւ եմ համարում, որ երկրորդ գրիքը՝ խորագրեալ «Հոգիի եւ Ինքնութեան Հետքերով» տպագրուել է իմ խմբագրութեամբ, Երեւանի Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում: Հայր Լեւոնը մայր հայրենիքում վաղուց արդէն ճանաչած, սիրուած եւ գնահատուած սփիւռքահայ գիտնականներից է, որի ելոյթները միշտ էլ զարդարել են մեր գիտական նստաշրջանները, յատկապէս իրենց բերած գիտական նորոյթներով եւ նուրբ վերլուծութիւններով: Սակայն այս ժողովածուն Հայաստանում հեղինակի լոյս ընծայած առաջին գիրքն է, որը մենք ընդամենը առաջին քայլն ենք համարում հայրենի ընթերցողին ներկայացնելու անուանի գիտնականի չափազանց ընդգրկուն գիտական հետաքրքրութիւնները: Ինչպէս գրում է հատորի առաջաբանի հեղինակը՝ արուեստաբան Վիգէն Ղազարեանը. «Մենք յուսով ենք, որ սրանով չի

վերջանայ հայրենիքում Հայր Լեւոնի երկերի հրատարակումը, որոնք ոչ այնքան կարելու են հեղինակի անձի, որքան մեր ներքին պատմական հոգեւոր յղացքի ճանաչման ու արժարժման համար»: Տուեալ պարագային ինձ համար կարելու է նաեւ հեղինակի անձի ճանաչումը: Ասում են, ոեւէ հեղինակին լաւ ճանաչելու համար պէտք է լինել հրա հայրենիքում կամ նրա ապրած վայրերում: Եւ ահա, լինելով Վենետիկում, այցելելով Սուր Դազարի վանքը եւ Սուր Խաչ եկեղեցին, լսելով Հայր Լեւոնի կենդանի խօսքը եւ նամանաւանդ հաղորդակցելով հայ լեզուի եւ մշակոյթի նրա հիմնած ամառնային խտացեալ դասընթացքի կազմակերպչական աշխատանքներին, զգացի թէ ինչ վիթխարի ազգանպաստ գործ է կատարում նա մեր հայրենիքի եւ սփիւռքի համար այս անչափ դժուարին ժամանակներում: Սակայն վերադառնանաք նրա նորածին հատորին:

Գիրքը Հայր Լեւոնի գիտական եւ հրապարակախօսական լայն ընդգրկումներով, սոսկ մի մասը ներկայացնող գրութիւնների ոչ ծաւալուն ընտրանին է, որն ընդհանուր գծերով ներկայացնում է մէկ անձի մէջ շահեկանօրէն զուգակցուած հմուտ աստուածաբանին, խորաթափանց բանասէր-պատմաբանին եւ կրքոտ ու հայրենասէր հրապարակախօսին: Չափազանց ուշագրաւ եւ արժէքաւոր է գրքի աւելի քան 70 էջերը գրաւող «Արդի քաղաքակրթութիւնը եւ կրօնքը» ուսումնասիրութիւնը: Կատարելով Վատիկանեան Բ. Տիեզերական ժողովի «Եկեղեցին ներկայ աշխարհի մէջ» խորագրեալ Սահմանադրութեան քննութիւնը, հեղինակը յստակօրէն ներկայացրել է ժողովին բերած նոր տեսակետները, անդրադառնալով այնպիսի հրատապ հիմնահարցերի, ինչպիսիք են մարդկային արդի գոյավիճակը, մարդու կոչումը, եկեղեցու դերը, մշակոյթը եւ քաղաքակրթութիւնը, տնտեսական-ընկերային կեանքը եւայլն, եւայլն:

Գրքի յաջորդ աւելի քան քսան էջերը տրամադրուած են հայ միջնադարեան որոշ հեղինակների վերաբերեալ աստուածաբանասիրական բնոյթի յօդուածներին՝ «Նարեկացի եւ Աստուածամայրը», «Աստուածաբանական ու գրական դիմագիծը «Յաճախապատում»ի հեղինակին եւ իր վարդապետութեան ընդհանուր գիծերը», «Յովհան Մանդակունի Սուրբ Հաղորդութեան մասին»: Ուշագրաւ է յատկապէս առաջինը, որը Հայր Լեւոնի գիտական երախայրիքն է՝ գրուած ընդամենը 13 տարեկան հասակում: Ապշում ես, թէ ինչպէս է կարողացել այդ պատանին ընկալել մեր խոշորագոյն միստիկ մտածողին եւ ընկալելուց յետոյ էլ վերլուծել նրա հոգեկան տուայտանքները, ալեկոծումները ի դէմս Տիրամօր միսթարիչ պատկերի: Եւ ինչպիսի հասուն գրիչ եւ յուզաթաթաւ լեզու. «Նարեկացի Սուրբ Կոյսին աստուածամայրութեան կը նուիրէ իր քնարին գեղեցկագոյն լարերը, մանաւանդ թէ սկելարը... Այս ոսկելարը

օժտուած է անսպառօրէն այլազան թրթռացումներով, որոնք ոչ միայն անհպելի փափկութեամբ մը կը նկարագրեն մօր եւ մանուկին փոխադարձ խանդադատանքը, այլ յաճախ կը զգենուն նաեւ արծուէթոռիչ թելերը՝ ճախրելու համար աստուածամայրութեան խորհուրդին անեզր անջրպետներուն մէջ» (էջ 83-84):

Հատորին մէջ առանձին գրաւիչ բոյլ են կազմում Մխիթար Մեքաստացուն նուիրուած յօդուածները, որոնք նոյնպէս տարբեր տարիների անդրադարձումներն են: Այս խմբի մէջ էլ դարձեալ գտնում ենք դերեւս պատանի (այս անգամ 15ամեայ) Լեոն Զեքիեանի «Մխիթարի Տիրամօր Նուիրուած Տաղերը» համառօտ բայց խիստ բովանդակալից գրութիւնը: Ուշագրաւ է, որ պատանի ուսումնասիրողը, որ մինչ այդ արդէն խորացել էր Նարեկացու տաղերի մէջ, նկատել է, որ Մխիթարի համանման տաղերի գրական արտայայտութիւնը, թէեւ առաւելապէս մօտենում է ողբական սեռին, «բայց ասիկա՝ Նարեկեան յորձանուտ, մրրկածուփ պոռթկացող ողբը չէ. Աւելի հանդարտ, գրեթէ մելամաղձիկ մթնոլորտ մը կը շնչէ այդ երգերէն» (էջ 106): Միւս յօդուածներում Հայր Լեւոնը աստիճանաբար շատ աւելի հասունացող գրչով բացայայտել է Մխիթարի մէջ մարդը եւ սուրբը, հոգեւորականը, հումանիստը, էկումենիզմի ռահվիրանը: Առանձնակի քննելով Վենետիկ հաստատուելու առաջին տարիների Մխիթար Աբբահօր գրած նամակներում հոգուր կեանքի անդրադարձները, արդէն 20ամեայ հեղինակը տեսել է մեծ ռահվիրայի ողջ էութիւնը հրդեհող տեսիլը, «որ էր իր ժողովուրդին բարիք ջամբելու, մինչեւ զոհուելու աստիճան իր ժողովուրդին նուիրուելու ծարարը» (էջ 127):

Հայր Լեւոն Զեքիեանի վաղ շրջանին վերաբերող այս գիտահետազոտական աշխատանքներին, որոնք ժողովուած են մամուլի էջերից կամ Պէյրութում տպագրուած «Բա՛ց մեզ, Տէր» հատորից, հետեւում է մի ծաւալուն յօդուած, որը տպագրուել է առաջին անգամ եւ հեղինակի նորագոյն աշխատանքներից է: Գրութիւնը խորագրուած է «Նախնական նկատողութիւններ հայ ինքնութեան հարցադրման նկատմամբ»: Աձօր չափազանց հրատապ այս հիմնահարցը վաղուց ի վեր եղել է Հայր Լեւոնի ուշադրութեան կենտրոնում եւ այս ուղղութեամբ նրա կատարած քննութիւնների եզրայանգումը կարելի է համարել խնդրոյ առարկայ յօդուածը: Այստեղ յստակօրէն սահմանուած են «ինքնութիւն» եւ «հայ ինքնութիւն» հասկացութիւնները, եւ քննուած են վիճայարոյց բազում խնդիրներ ու գաղափարներ՝ ազգ, քաղաքացիութիւն, Մեծ Եղեռն, հայի կերպար, արեւելահայերէն-արեւմտահայերէն, ուղղագրութիւն: Անշուշտ, մէկ բանախօսութեան ընթացքը հնարաւոր չէ հանգամանօրէն անդրադառնալ բոլոր այս խնդիրներին, ընդունելով կամ երբեմն

վիճարկելով հեղինակի տեսակետները: Բերեմ միայն հայ ազգի նրա սեղմ եւ դիպուկ սահմանումը. «Հայ ազգը իր պատմական, բազմադարեան հոլովոյթով, հողային ու քաղաքացիական տարածքները անդրազանցող մի ամբողջութիւն է, որ կը ներգրաւէ բոլոր անոնք, որոնք իրենք զիրենք մաս կը զգան ու կը դաւանին այդ ամբողջութեան, բերելով՝ իւրաքանչիւրն իր նպաստը, իր հնարաւորութիւնների չափով եւ ձեւով եւ իր կեանքի պայմաններու եւ շրջապատի շտաւիդին մէջ, անոր պահպանման, գոյատեւման, բարգաւաճման» (էջ 147): Ըստ երեւոյթի ամէն ինչ ասուած է:

Հատորն ւարտում է Հայր Լեւոնի հեղինակած քարոզների ու դամբանականների մի ծաղկաքաղով: Դրանք հարկաւոր է կարդալ կամ լսել՝ հաղորդակցուելու համար մի դէպքում հմուտ աստուածաբանի, միւս դէպքում անկեղծ բարոյախօսի, մէկ այլ դէպքում երախտագէտ սանի խոհերին ու զգացումներին՝ արտայայտուած գեղեցիկ, հիւթեղ եւ կենդանի լեզուով:

Կ'ուզեմ ամփոփել իմ խօսքը՝ արտայայտելով այն մաղթանքն ու համոզմունքը, որ Հայր Լեւոն Զեքիեանը դեռեւս երկար տարիներ պիտի շարունակի իր արգասաբեր ընթացքը հոգու եւ ինքնութեան հետքերով:

10 Օգոստոս, 2001  
Վենետիկ